

32 Ուր ժամանեալ նա անդանդաղ
Հետազօտեալ զ^օխաշանց մակաղ
Զքններ ըզկոյս, գառինս մատաղ
Եւ զոչխարաց մաքեաց կենցաղ:

33 Եւ զորս գիտէր անդ բեկ, կոյր, կաղ
Լըքեալ պապեալ եւ անսուաղ,
Հոգեւորաւ ցանդ անյապաղ
Խընամ տարեալ տած էր յաճախ:

34 Զայնս որք էին աստ անդ ճապաղ,
Շըրջեալ յաւէժ որպէս անկախ
Գաւազանաւ բանից շատ հաղ
Դարձուցանէր յիւր բուն փարախ:

35 Այնց որք էին յունայնս պատաղ
Ի՛ ի ճարակիլ անհոգ դանդաղ
Արբուցանէր խիստ դան վաղվաղ
Ատեալ զ^օնոցուն կեանս աղաւաղ:

36 Եւ զորս մեղօք էին շաղախ
Քաւմամբ մաքրէր զերթ սրբբիշ շաղ
Զապաշխարօղս դործէր ուրախ
Վասն անդարձից կարգայր աւանդ:

37 Իսկ որք բարուք էին անաղ,
Աղէր զայնս իբր համեմիշ աղ,
Զուշեղս մարդէր զիմօք ծիծաղ,
Զախմարս վարժէր ձայնիւ խաղաղ:

38 Որ միանգամ չունէր սիրտ պաղ
Անայր նըմա ոչ կեայր նուաղ
Որ ոստոստէր իբրեւ մարախ
Չառնոյր զ^օկենաց հաց յիւր մախաղ: